



**Հետևյալ թեստը ցույց կտա, թե ինչքանով ես այժմ պատրաստ՝ իրագործելու բիզնես գաղափարդ: Յուրաքանչյուր հարցի համար պետք է ընտրել միայն մեկ տարբերակ, որն առավել համապատասխան է քեզ:**

**Հ1. Անսպասելի փոփոխություններն ու անակնկալները.**

- ա) Բարդացնում են իրավիճակը:
- բ) Ստիպում են նոր լուծումներ փնտրել:
- գ) Ամբողջությամբ խախտում են իմ պլաններն ու մտքերը:

**Հ2. Նախքան ինչ-որ նոր բան ձեռնարկելը ես ծանրութթև եմ անում հաջողության հասնելու կամ ձախողելու հավանականությունը.**

- ա) միշտ,
- բ) երբեմն,
- գ) երբեք:

**Հ3. Երբ ինձ հարցնում են նպատակներիս մասին.**

- ա) Հստակ կարող եմ ձևակերպել, թե ինչի պետք է հասնեմ մոտակա 5 տարվա ընթացքում:
- բ) Ձգտում եմ շրջանցել հարցը, քանի որ հստակ չեմ պատկերացնում, թե որոնք են նպատակներս:
- գ) Կարողանում եմ պատասխանել միայն մոտակա 6 ամսվա կտրվածքով:

**Հ4. Երբ ինձ գաղտնիք են վստահում.**

- ա) Չեմ կարողանում դրանով չկիսվել ընկերներիս հետ:
- բ) Դժվար է, բայց փորձում եմ գաղտնապահ լինել:
- գ) Ինչ-որ մեկն ինձ բա՞ն էր պատմել:

**Հ5. Հանուն նպատակի՝ ռիսկի դիմելը.**

- ա) Ինձ համար է:
- բ) Պետք է նախապես հստակ հաշվարկված լինի:
- գ) Հաստատ կբերի գլխացավանքի:

**Հ6. Միաժամանակ տարբեր առաջադրանքների կատարումն ու թիմի ղեկավարումն ինձ համար են.**

- ա) Երբեմն, եթե թիմը լավն է:
- բ) Միշտ:
- գ) Ես չեմ վստահում ուրիշներին և ամեն ինչ անում եմ ինքս:

**Հ7. Երբ աշխատանքը կրկնվում է.**

- ա) Անհետաքրքիր է, բայց կատարում եմ:
- բ) Ձանձրալի է և նյարդայնացնող:
- գ) Կարևոր չէ, գործը պետք է արվի:

**Հ8. Նոր իրավիճակներին.**

- ա) Հեշտությամբ եմ հարմարվում:
- բ) Ի վերջո հարմարվում եմ, բայց ինձ ժամանակ է պետք:
- գ) Չեմ կարողանում սառնասրտորեն վերաբերվել:

**Չ9. Ես փորձում եմ վերլուծել բոլոր խնդիրները, որոնց կարող եմ բախվել, և պլանավորում եմ, թե ինչ միջոցներ կարող եմ ձեռնարկել առաջացած խնդիրը լուծելու համար.**

- ա) Դժվար է խոսել ապագայի մասին:
- բ) Միշտ այդպես եմ անում:
- գ) Ժամանակի ավելորդ ծախս է:

**Չ10. Սկսնակ ընկերության համար ռազմավարական պլանավորումը.**

- ա) Սկզբում պետք չէ, սակայն խնդիրների առաջացման դեպքում կարելի է կազմել:
- բ) Խիստ անհրաժեշտ և օգտակար է:
- գ) Ժամանակի ավելորդ կորուստ է. պետք է գործել պահի դրությամբ:

**Չ11. Երբ հաջողության եմ հասնում.**

- ա) Կիսվում եմ միայն ամենամտերիմների հետ:
- բ) Կիսում եմ այն բոլորի հետ:
- գ) Չեմ բարձրաձայնում, որ աչքով չտան:

**Չ12. Եթե ինչ-որ բան չստացվի, կթողնեմ նախաձեռնածս և կգրադվեմ նոր գործով.**

- ա) Երբեմն,
- բ) միշտ,
- գ) երբեք:

**Չ13. Իմ աշխատանքն ու առաջադրանքները.**

- ա) Կատարում եմ ըստ պատահական հերթականության՝ երբ հաջողվում է:
- բ) Անպայման կատարում եմ, երբ ժամանակս ներում է:
- գ) Դասավորում եմ ըստ առաջնահերթության և դրանց համար հատկացնում կոնկրետ ժամանակահատված:

**Չ14. Ես գիտեմ, որ իմ բիզնես գաղափարը.**

- ա) Սարեր է շուռ տալու:
- բ) Արդյունավետ գործելու է:
- գ) Հավանաբար կտարածվի տեղական շուկայում:

**Չ15. Առաջադրանք կատարելիս ինձ համար ավելի գերադասելի է.**

- ա) Հետևել ուրիշների կողմից տրվող հստակ հրահանգների:
- բ) Ստեղծագործել և առաջարկել նոր մոտեցումներ:
- գ) Ստանալ որոշակի ուղղություն առաջադրանքի կատարման համար:

**Չ16. Երբ շուկայում հայտնվի մի նոր մրցակից, ես.**

- ա) Կփորձեմ գտնել բոլոր հնարավոր տվյալներն իր մասին և կմշակեմ համապատասխան քայլեր:
- բ) Ուշադրություն չեմ դարձնի, քանի որ արդեն ունեմ իմ հաճախորդներն ու գործընկերը:
- գ) Մտովի կկիսեմ շուկայի իմ մասնաբաժինը:

**Չ17. Ես հստակ պատկերացնում եմ, թե ինչպիսին կլինի իմ բիզնեսը.**

- ա) 5 և նույնիսկ 10 տարի հետո,
- բ) առավելագույնը 1 տարի անց,
- գ) միայն գալիք երկուշաբթի օրվա կտրվածքով:

**Չ18. Որևէ գործ ձեռնարկելիս.**

- ա) Փորձում եմ օգտվել ծանոթներիս/ընկերներիս աջակցությունից:
- բ) Գերադասում եմ ոչ մեկի ոչինչ չխնդրել:
- գ) Օգտվում եմ աջակցությունից, երբ առաջարկում են:

**Չ19. Երբ իմ ճանապարհին ինչ-որ խոչընդոտների եմ հանդիպում.**

- ա) Անկախ ամեն ինչից՝ փորձում եմ հասնել իմ ուզածին:
- բ) Հապաղում եմ, բայց հետո շարունակում:
- գ) Շատ հաճախ հիասթափվում եմ ու կիսատ թողնում:

**Չ20. Իմ աշխատանքը կատարում եմ սահմանված ժամանակահատվածում.**

- ա) Երբեմն,
- բ) միշտ,
- գ) երբեք:

**Չ21. Բիզնեսի մեջ չկան կարևոր և անկարևոր գործեր, և ես սիրով կկատարեմ յուրաքանչյուր աշխատանք.**

- ա) Համաձայն եմ:
- բ) Համաձայն չեմ, իմ գործն այն դեկավարելն է:
- գ) Այոքան էլ համաձայն չեմ:

**Չ22. Խնդիրներն ու դժվարություններն ինձ համար.**

- ա) Անցանկալի խոչընդոտներ են:
- բ) Մարտահրավերներ են, որոնք անխուսափելի են:
- գ) Բուն աշխատանքից շեղող երևույթներ են, որոնց լուծումը երբեմն փորձառություն է ավելացնում:

**Չ23. Նոր բիզնես ծրագիր մշակելիս հաշվի կառնեմ.**

- ա) Այն, թե ինչքան շահույթ են ստանում այդ ոլորտում արդեն գործող ընկերությունները:
- բ) Այդ ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալները և պոտենցիալ հաճախորդների կարծիքը:
- գ) Շրջապատիս կարծիքը, թե արդյո՞ք պատրաստ եմ գումար վճարելու այդ ծառայության/ապրանքի դիմաց:

**Չ24. Ես շահագրգռված եմ, որ իմ շաբաթական հանձնարարականները կատարեմ նույնքան լավ, որքան տարեկանները.**

- ա) Երբեք,
- բ) Երբեմն,
- գ) միշտ:

**Չ25. Նոր միջավայրում.**

- ա) Դժվար եմ հարմարվում:
- բ) Ժամանակ է անհրաժեշտ հարմարվելու համար:
- գ) Ինձ շատ լավ եմ զգում և արագ ծանոթություններ եմ հաստատում:

**Չ26. Երբ առաջադրանք են տալիս որևէ մեկին և պատշաճ որակի արդյունք չեն ստանում.**

- ա) Ինքս են անում առաջադրանքը, ինչի հետևանքով տուժում են այլ գործեր:
- բ) Եվս մի քանի անգամ փորձում են բացատրել ու ստիպել մարդկանց անել այն ամենը, ինչ ինձ անհրաժեշտ է:
- գ) Հանձնարարում են այլ մարդկանց:

**Չ27. Ծրագրերը պլանավորելիս դրանք բաժանում են ավելի փոքր մասերի.**

- ա) երբեք,
- բ) երբեմն,
- գ) միշտ:

**Չ28. Հաջողված բիզնեսի գրավականն է.**

- ա) խոշոր ներդրումը,
- բ) ղեկավարի և թիմի անձնվեր աշխատանքը,
- գ) մրցակիցների քիչ քանակը:

**Արդյունքների հաշվարկ:** Թեստի արդյունքների հաշվարկը պետք է կատարել ներքևի արյունակի միջոցով: Առաջին սյունակում այն 7 հատկանիշներն են, որոնցից յուրաքանչյուրի համար կունենաս առանձին գնահատում 5-րդ սյունակում: 2-րդ սյունակում նշված են հարցերը: Պետք է թեստից դուրս բերել բոլոր քսանութ հարցերի քո պատասխանները՝ դրանք վերցնելով օղակի մեջ: 4-րդ սյունակի յուրաքանչյուր տողում պետք է գրել համապատասխան հարցի արդյունքը, իսկ սյունակ 5-ում գրվում է բոլոր չորս հարցերի արդյունքների գումարը: Օրինակ՝ «Ճկունություն» հատկանիշի համար գումարում ենք 1, 8, 15 ու 22 հարցերի արդյունքները և ունենում վերջնական թիվ: Ընդհանուր վերջնարդյունք ստանալու համար պետք է գումարել 5-րդ սյունակի բոլոր արդյունքները և գրանցել այն 5-րդ սյունակի վերջին տողում:

**Աղյուսակ 1. Թեստի արդյունքների հաշվարկ**

1. Հատկանիշներ	2. Հարց	3. Տարբերակներ			4. Արդյունք	5. Վերջնական արդյունք
<b>Ճկունություն</b>	Հ1	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	Հ1 + Հ8 + Հ15 + + Հ22 = <input type="text"/>
	Հ8	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	
	Հ15	ա. - 0	բ. - 10	գ. - 5	_____	
	Հ22	ա. - 0	բ. - 10	գ. - 5	_____	
<b>Ողջամտություն</b>	Հ2	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	Հ2 + Հ9 + Հ16 + + Հ23 = <input type="text"/>
	Հ9	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	
	Հ16	ա. - 10	բ. - 0	գ. - 5	_____	
	Հ23	ա. - 0	բ. - 10	գ. - 5	_____	
<b>Ճանապարհ</b>	Հ3	ա. - 10	բ. - 0	գ. - 5	_____	Հ3 + Հ10 + Հ17 + + Հ24 = <input type="text"/>
	Հ10	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	
	Հ17	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	
	Հ24	ա. - 0	բ. - 5	գ. - 10	_____	
<b>Աջակիցներ</b>	Հ4	ա. - 0	բ. - 5	գ. - 10	_____	Հ4 + Հ11 + Հ18 + + Հ25 = <input type="text"/>
	Հ11	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	
	Հ18	ա. - 10	բ. - 0	գ. - 5	_____	
	Հ25	ա. - 0	բ. - 5	գ. - 10	_____	
<b>Նպատակա- վաճողություն</b>	Հ5	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	Հ5 + Հ12 + Հ19 + + Հ26 = <input type="text"/>
	Հ12	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	
	Հ19	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	
	Հ26	ա. - 0	բ. - 10	գ. - 5	_____	
<b>Արդյունա- վետություն</b>	Հ6	ա. - 5	բ. - 10	գ. - 0	_____	Հ6 + Հ13 + Հ20 + + Հ27 = <input type="text"/>
	Հ13	ա. - 0	բ. - 5	գ. - 10	_____	
	Հ20	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	
	Հ27	ա. - 0	բ. - 5	գ. - 10	_____	
<b>Կիրք</b>	Հ7	ա. - 5	բ. - 0	գ. - 10	_____	Հ7 + Հ14 + Հ21 + + Հ28 = <input type="text"/>
	Հ14	ա. - 10	բ. - 5	գ. - 0	_____	
	Հ21	ա. - 10	բ. - 0	գ. - 5	_____	
	Հ28	ա. - 0	բ. - 10	գ. - 5	_____	
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>					<input type="text"/>	

**Արդյունքների մեկնաբանություն:** Ստանալով վերջնական արդյունք հատկանիշներից յուրաքանչյուրի մասով՝ կարող ես եզրակացնել, թե որն է քո թույլ կողմը: Եթե 5-րդ սյունակում տեսնում ես, որ մի հատկանիշի մասով հավաքել ես 0-15 միավոր, ուրեմն պետք է աշխատես այդ ուղղությամբ, քանի որ դա բացահայտ թույլ կողմ է քեզ համար: 16-30 միավոր հավաքելու դեպքում պետք է եզրակացնել, որ այդ հատկանիշի առումով բարելավման տեղ դեռ ունես և հետևողական աշխատանքով կարող ես հասնել լավ արդյունքի: Իսկ եթե հավաքել ես 31-40 միավոր, ապա վստահաբար դա քո ուժեղ կողմերից է, և պետք է ձգտես պահել այն նույն մակարդակի վրա:

Գումարելով 5-րդ սյունակի բոլոր յոթ արժեքները՝ կարող ես պատկերացնել քո՝ որպես ձեռներեց հանդես գալու հավանականությունը: Եթե հավաքել ես.

✚ **մինչև 109 միավոր**, ապա գուցե արժե ժամանակավորապես մի կողմ դնել սեփական բիզնես գաղափարն իրագործելու միտքը և զբաղվել ինքնա-կրթությամբ՝ ի դեմս վերապատրաստումների, բիզնես գրականություն ընթերցելու կամ փորձառություն ավելացնելու:

✚ **110-209 միավոր**, ապա ունես նախադրյալներ, բայց պետք է աշխատես: Այս դեպքում հարկ է հատկապես ուշադիր լինել և տեսնել, թե յոթ հատկանիշից ո՞րն է ավելի թույլ՝ համեմատած մնացածների: Առանձնացնելով թույլ կողմերը, մշակելով դրանց բարելավման ռազմավարություն և որ ամենակարևորն է՝ իրականացնելով այդ բարելավումը՝ կարելի է վստահ սկսել սեփական գործ հիմնելու դժվար, բայց իրագործելի ուղին:

✚ **210-280 միավոր**, ապա առանց երկմտելու պետք է գործի անցնես՝ շարունակելով ինքնազարգանալ և ձգտել լիարժեք կայացման:

Ամեն դեպքում պետք է հաշվի առնել, որ թեստի նպատակը չէ ոգևորել կամ հետ կանգնեցնել քեզ սեփական գործ սկսելու մտքից: Ընդհակառակը, այն ցույց է տալիս թույլ կողմերը և ստիպում մտածել դրանց ուղղությամբ, ինչպես նաև օգնում որոշում կայացնել, երբ կասկածների մեջ ես: Անկեղծ ասած՝ եթե զգում ես՝ հենց այս պահն է, որ քեզ հնարավորություն է տալիս իրականություն դարձնելու գաղափարդ, և նման երկրորդ պահ էլ չի լինի, ուրեմն գործի՝ անցիր և ապացուցի՛ր, որ դու կարող ես:

Այդպես արել են և շարունակում են անել աշխարհի ամենահաջողակ ձեռներեցները:

**Թեստը՝ «Քո սեփական բիզնեսը Հայաստանում» գրքից**